ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի մայիսի 31-ի, ժամը 14:00-ի նիստի
N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լուսինե Արմենի Հարությունյանի** և լեզուների ամբիոնի ավագ դասախոս **Ռուզաննա Վազգենի Խոստիկյանի «English in Finance and Banking»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկը նպատակաուղղված է անգլերենով մասնագիտական գրականություն ընթերցելու հմտությունների զարգացմանը, ֆինանսների և բանկային գործունեության ոլորտներին վերաբերող համապատասխան բառապաշարի ուսուցմանը: Այն միանշանակ կարող է նպաստել ուսանողների՝ մասնագիտության ոլորտում դրսևորվող խորհրդակցական կարողությունների ձևավորմանը: Ձեռնարկը բաղկացած է 12 դասից, որոնք վերաբերում են «Ֆինանսներ» և «Բանկային գործ» մասնագիտությունների մեջ կիրառվող առանցքային հասկացություններին՝ ֆինանսական գրագիտություն, ֆինանսների պատմություն, ընկերությունների ֆինանսական էթիկա, կորպորատիվ ֆինանսներ, արժեթղթեր, բորսաներ, բանկային գործունեություն, բանկային ծառայություններ և այլն: Դասերից յուրաքանչյուրն սկսվում է մասնագիտական որոշակի բնագավառին վերաբերող հարցաշարով, որի քննարկումը կնպաստի ուսանողների բանավոր խոսքի կատարելագործմանը և տվյալ թեմաներով բովանդակալից զրույց վարելու կարողությունների զարգացմանը: Հատկապես կարևոր են տեքստի բովանդակության ընկալմանը նպաստող և ուսանողի բառապաշարի հարստացմանն ուղղված յուրաքանչյուր դասին հաջորդող մասնագիտական բառացանկերը, որտեղ ներկայացված են տվյալ հասկացության ընդգրկուն նկարագիրը և թարգմանությունը: Տեքստին առնչվող վարժությունները խթանում են վերջինիս բովանդակության ընկալումը՝ նպաստելով նաև մասնագիտական տեքստերի ընթերցանության և ընկալման հմտությունների զարգացմանը: Ձեռնարկի վերջում տրված է ընդլայնված բառարան՝ հիմնված

ներկայացվող ամբողջ նյութի վրա, ինչպես նաև տվյալ ոլորտներում լայնորեն կիրառելի հապավումների ցանկ:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 3 դրական կարծիք.

1. Ռ.Ս.Առաքելյան՝ Երևանի պետական համալսարանի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու:

2. Ա.Ռ.Գրիգորյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու:

3. Ա.Ս.Խաչատրյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ուսումնական ձեռնարկը նախատեսված է տնտեսագետ ուսանողների, ֆինանսների և բանկային գործունեության տարբեր ոլորտներում աշխատող մասնագետների, ինչպես նաև անգլերենով հրատարակված մասնագիտական գրականությունից օգտվել ցանկացողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, լեզուների ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լուսինե Արմենի Հարությունյանի** և լեզուների ամբիոնի ավագ դասախոս **Ռուզաննա Վազգենի Խոստիկյանի «English in Finance and Banking»** ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության, 150 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչական պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2023 թ. մայիսի 31
Երևան